

Luys Lnyju®



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍ – 2024

Հաշվետվություն «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության կողմից հրապարակված զեկույցի (2024թ.) հիման վրա



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	1
1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	3
2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ	5
3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	8
4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ	11
ԱՄՓՈՓՈՒՄ	14

ՆԱԽԱԲԱՆ

Կասկածից վեր է քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումների համատեքստում կոռուպցիայի խիստ բացասական ազդեցությունը: Այդ իսկ պատճառով ժամանակակից աշխարհում այն համարվում է մարդկության առջև ծառայած լրջագույն մարտահրավերներից մեկը: Կոռուպցիայի դրսևորումները տարբեր են՝ սկսած պետական ռեսուրսների անարդյունավետ բաշխումից մինչև մարդու հիմնարար իրավունքների խախտումներ: Այն խաթարում է հասարակության վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ՝ կասկածի տակ դնելով արդարությունն ու թափանցիկությունը, ինչն իր հերթին խոչընդոտում է երկրի կայուն զարգացմանը: Այն հատկապես վտանգավոր է զարգացող երկրներում, քանի որ կարող է արգելակել անհրաժեշտ բարեփոխումների իրականացումը, խորացնել սոցիալական անհավասարությունը և, վերջին հաշվով, վտանգել աղքատության հաղթահարման և հասարակական բարիքների արդար բաշխման խնդիրների լուծումը:

Կոռուպցիան նաև խոչընդոտում է միջազգային համագործակցությանը, խաթարում է գլոբալ անվտանգությունն ու կայունությունը (մասնավորապես, այն պատճառով, որ հաճախ կապված է լինում կազմակերպված հանցավորության և ահաբեկչության ֆինանսավորման հետ):

Վերը շարադրվածի համատեքստում կոռուպցիայի դեմ պայքարը առաջնահերթ խնդիր է թե՛ առանձին երկրների, թե՛ միջազգային հանրության համար: Այսինքն՝ այն միաժամանակ և՛ լոկալ, և՛ գլոբալ մարտահրավեր է, և այդ իսկ պատճառով, դրա մշտադիտարկումն ու կառավարումն առավել են կարևորվում: Այս հանգամանքից է բխում կոռուպցիայի չափման, գնահատման, ինչպես նաև միջերկրային և միջժամանակային համեմատություններ կատարելու անհրաժեշտությունը: Նշված խնդիրներով զբաղվում են ոչ միայն առանձին երկրների մասնագիտացված կառույցներն ու ակադեմիական հաստատությունները, այլև մի շարք հեղինակավոր միջազգային կազմակերպություններ: Ամենահայտնիներից է «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության կողմից 1995 թվականից ի վեր հրապարակվող «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» ամենամյա զեկույցների շարքը: Այդ զեկույցներում հաշվարկվում է պետական հատվածում կոռուպցիայի ընկալման ինդեքսը (ԿԸԻ)՝ ինչպես համաաշխարհային, այնպես էլ առանձին երկրների ու տարածաշրջանների մակարդակով: Հաշվարկման մեթոդիկայի համընդհանուր և կայուն բնույթը նաև թույլ է տալիս կատարելու միջժամանակային և միջերկրային համեմատություններ:

ԿԸԻ-ն, որպես ամեն տարի հաշվարկվող ցուցանիշ, մեծ կարևորություն է ձեռք բերել թե՛ երկրների իշխանությունների, թե՛ գործարար շրջանակների և թե՛ տնային տնտեսությունների համար:

Օրերս հրապարակվեց «Թրանսփարենսի Ինթերնեյշնլի»՝ «Կոռուպցիայի ընկալման ինդեքս - 2024» զեկույցը¹ (այսուհետ՝ Ջեկույց), որտեղ դիտարկված է աշխարհի 180 երկիր:

ԿԸԻ-ի հաշվարկման հիմքում դրվում են 13 արտաքին աղբյուրների, այդ թվում՝ Համաշխարհային բանկի, Համաշխարհային տնտեսական համաժողովի, դիսկեր գնահատող և խորհրդատվական մասնավոր ընկերությունների, տարբեր հետազոտական կենտրոնների և այլ հեղինակավոր կառույցների տվյալներ:

2024 թվականի զեկույցը կոռուպցիան դիտարկում է կլիմայական ճգնաժամի դեմ պայքարի համատեքստում: Ընդգծվում է այդ պայքարի վրա կոռուպցիայի միանշանակ խոչընդոտող ազդեցությունը: Նշվում է, որ, չնայած դրան, վերջին շրջանում կլիմայական կարևորագույն միջոցառումների՝ ներառյալ կլիմայական գազաթնաժողովների (օրինակ՝ COP-29-ի) անցկացումը հաճախ վստահվում է այնպիսի երկրների, որոնք ունեն շատ ցածր կամ նվազող ԿԸԻ: Ջեկույցում հատուկ հղում է արվում «Թրանսփարենսի Ինթերնեյշնլի»՝ վերջերս կատարված ուսումնասիրությանը², որը նվիրված է Բաքվում կայացած COP-29 գազաթնաժողովին և բացահայտում է նավթային ու գազային լոբբիստների ազդեցությունը նման միջոցառումների վրա, ինչը լրջորեն խաթարում է կլիմայի քաղաքականության անկախությունն ու թափանցիկությունը:

«Լոյս» հիմնադրամը ԿԸԻ-ի յուրաքանչյուր ամենամյա զեկույցի վերաբերյալ ավանդաբար հրապարակում է վերլուծություն³: Սույն վերլուծության սկզբում հակիրճ ներկայացված են կոռուպցիայի ընկալման ինդեքսը և դրա հաշվարկման մեթոդաբանությունը: Երկրորդ բաժնում ներկայացված են զեկույցի՝ գլոբալ մակարդակին վերաբերող առավել ուշագրավ փաստերը: Այնուհետև անդրադարձ է կատարված Հայաստանում կոռուպցիայի ընկալման վերաբերյալ գնահատականներին: Վերլուծության հաջորդ բաժինը նվիրված է որոշ երկրների հետ Հայաստանի տարածաշրջանային համադրումներին: Վերջում հակիրճ ներկայացված են վերլուծության հիմնական եզրահանգումները:

¹ Ջեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ https://images.transparencycdn.org/images/Report_CPI2024.pdf (այցելվել է 11.02.2025թ.):
² <https://www.transparency.org/en/publications/cop-co-opted-how-corruption-and-undue-influence-threaten-multilateral-climate-action> (այցելվել է 11.02.2025թ.):
³ Կոռուպցիայի ընկալման ինդեքսի վերաբերյալ «Լոյս» հիմնադրամի կողմից 2019-ից ի վեր կատարված բոլոր վերլուծությունները հասանելի են հիմնադրամի պաշտոնական կայքում՝ <https://www.luys.am/index.php?m=publications...>:

1. ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոռուպցիայի ընկալման ինդեքսը հաշվարկվում է գործարարների և փորձագետների գնահատականների հիման վրա և արտացոլում է երկրի պետական հատվածում առկա կոռուպցիայի ընկալման աստիճանը:

Ցուցանիշը տատանվում է 0-ից 100-ի սահմաններում, որտեղ 0-ն համապատասխանում է հասարակության լիակատար կոռումպացվածությանը, իսկ 100-ը՝ կոռուպցիայի իսպառ բացակայությանը:

ԿԸԻ-ի հաշվարկման գործընթացը ներառում է հետևյալ հիմնական փուլերը.

1. Տվյալների աղբյուրների ընտրություն

ԿԸԻ-ի հաշվարկման համար պարտադիր պայման է միայն այնպիսի աղբյուրների տվյալների օգտագործումը, որոնք՝

- հնարավորություն են տալիս քանակապես չափելու պետական հատվածում կոռուպցիայի ընկալումները,
- հիմնվում են այնպիսի վստահելի ու վավերական մեթոդաբանության վրա, որը թույլ է տալիս նույն սանդղակով չափելու և կարգորոշելու տարբեր երկրներ,
- թույլ են տալիս ստանալ գնահատականների բավականաչափ մեծ միջակայքեր, որոնցով հնարավոր է տարբերակել դիտարկվող բոլոր երկրները,
- վարկանիշավորման համար դիտարկում են բավականաչափ մեծ թվով երկրներ,
- վարկանիշավորման համար դիտարկում են երկրի փորձագետների կամ գործարարների գնահատականները,
- վերաբերում են վստահելի հաստատության/կազմակերպության,
- վարկանիշավորումն իրականացնում են բավարար հաճախականությամբ (առնվազն երկու տարին մեկ անգամ):

ԿԸԻ-ի հաշվարկման համար օգտագործվում են 12 հաստատությունների 13 տվյալների աղբյուրներ⁴: Ստորև ներկայացված են այդ աղբյուրները՝

1. AFDB - Աֆրիկյան զարգացման բանկի 2023թ. Երկրի քաղաքականության և ինստիտուցիոնալ գնահատում,

⁴ <https://images.transparencycdn.org/images/CPI-2024-Methodology.zip> (այցելվել է 12.02.2025թ.):

* Աստղանիշով ներկայացված են այն 6 աղբյուրները, որոնք օգտագործվել են Հայաստանի 2024թ. ԿԸԻ-ի հաշվարկման համար:

2. BF (SGI) - Բերթելսմանի հիմնադրամի կայուն կառավարման 2024թ. ցուցանիշներ,
3. BF (TI)* - Բերթելսմանի հիմնադրամի 2024թ. տրանսֆորմացիոն ինդեքս,
4. EIU - «Էկոնոմիստ Ինթելիջենս Յունիթ»-ի («Էկոնոմիստ» թերթի հետազոտական բաժնի) Երկրի ռիսկայնության 2024թ. վարկանիշ,
5. FH* - Ֆրիդոմ Հաուզի Անցումային փուլում գտնվող երկրներ, 2024թ.,
6. GI* - Գլոբալ Ինսայթի Երկրի ռիսկայնության 2023թ. վարկանիշ,
7. IMD - Մենեջմենթի զարգացման ինստիտուտի Համաշխարհային մրցունակության 2024թ. տարեգրքի Գործադիր ղեկավարների կարծիքի հարցում,
8. PERC - Քաղաքական և տնտեսական ռիսկի խորհրդատվության Ասիական հետազոտական-վերլուծական տեղեկագիր, 2024թ.,
9. PRS* - Քաղաքական ռիսկերի միջազգային ծառայությունների Երկրի ռիսկայնության 2024թ. ուղեցույց,
10. WB - Համաշխարհային բանկի Երկրի քաղաքականության և ինստիտուցիոնալ համակարգի գնահատում, 2023թ.
11. WEF* - Համաշխարհային տնտեսական համաժողովի Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցում, 2024թ.,
12. WJP- Արդարադատության համաշխարհային ծրագրի Օրենքի գերակայության համաթվի 2024թ. փորձագիտական հարցում,
13. VDEM* - Ժողովրդավարության բազմազանության 2024թ. ծրագիր:

2. Տվյալների (ենթահինդեքսների) ստանդարտացում

ԿԸԻ-ի հաշվարկման համար տվյալները ստանդարտացվում են: Ստանդարտացումն ապահովվում է գնահատականների՝ 0-ից 100 միջակայքում նորմավորման միջոցով: Այն իրականացվում է երկու քայլով: Առաջին քայլով յուրաքանչյուր աղբյուրի դեպքում նախ՝ տվյալ երկրի արժեքից հանվում է համապատասխան վիճակագրական շարքի միջին թվաբանականը և այնուհետև ստացված արդյունքը հարաբերվում է այդ շարքի ստանդարտ շեղմանը: Երկրորդ քայլով՝ ստանդարտացված միավորները փոխակերպվում են ԿԸԻ սանդղակի՝ դրանք բազմապատկելով 2012թ. ԿԸԻ ստանդարտ շեղման արժեքով (20) և գումարելով 2012 թվականին ԿԸԻ-ի միջինը (45), որպեսզի տվյալների հավաքածուն համապատասխանի 0-100 սանդղակին:

3. ԿԸԻ-ի հաշվարկ

ԿԸԻ-ն հաշվարկվում է, միայն եթե վերոհիշյալ 13 աղբյուրներից առկա է առնվազն 3-ից ստացված գնահատական (ենթահինդեքս): Երկրի ԿԸԻ-ն իրենից

ներկայացնում է այդ երկրի համար հասանելի բոլոր ստանդարտացված ենթահինդեքսների միջին թվաբանականը՝ կլորացված ամբողջ թվերի:

4. ԿԸԻ-ի անորոշության աստիճանի գնահատում

Հաջորդ փուլում հաշվարկվում է ԿԸԻ-ի ստանդարտ սխալի չափը և վստահության միջակայքը: Կատարված հաշվարկի հուսալիությունն ավելի մեծ է, եթե ստանդարտ սխալը փոքր է:

2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

«Կոռուպցիայի ընկալման ինդեքս - 2024» գեկույցը հատուկ ուշադրություն է դարձնում կլիմայի փոփոխության դեմ պայքարի մարտահրավերներին: Մասնավորապես, նշվում է, որ կոռուպցիան լուրջ վտանգ է ներկայացնում ամբողջ աշխարհում կլիմայի պահպանման նպատակով հատկացված ֆինանսավորման համար: Վերջին շրջանում մի կողմից՝ աշխարհի տարբեր մասերում արձանագրվում են ջերմաստիճանային նոր ռեկորդներ և ծայրահեղ կլիմայական պայմաններ, մյուս կողմից՝ ականատես ենք լինում շատ երկրներում ժողովրդավարության նահանջի, ինչպես նաև գլոբալ կլիմայական պայքարի թուլացման: Այս պայմաններում, կոռուպցիան առավել է բարդացնում կլիմայական ճգնաժամի դեմ պայքարը: Ընդգծվում է, որ միջազգային հանրությունը պետք է հաշվի առնի կոռուպցիայի և կլիմայական խնդիրների միջև ուղիղ կապը: Զեկույցում նշվում է, որ կոռուպցիան լուրջ խնդիր է նաև այսպես կոչված «կլիմայական դիվանագիտության» ոլորտում և անդրադառնում է այն փաստին, որ մարդկության ապագայի համար կարևորագույն նշանակություն ունեցող մի շարք միջոցառումներ (ներառյալ կլիմայական գազաթնաժողովներ) հյուրընկալվել կամ հյուրընկալվելու են այնպիսի երկրներում, որոնք կոռուպցիայի դեմ պայքարի առումով, մեղմ ասած, «խնդիրներ ունեն»: Մասնավորապես, նշված է, որ.

- **COP-29 գազաթնաժողովը հյուրընկալած Ադրբեջանի ԿԸԻ-ն ընդամենը 22 միավոր է: Ընդ որում, կազմակերպիչների կողմից ապահովվել է առնվազն 1,773 նավթային և գազային լոբբիստի մասնակցություն գազաթնաժողովին:**
- Բրազիլիան, որը հյուրընկալելու է COP-30-ը և պատասխանատու է լինելու մինչև 2035 թվականը 1.3 տրիլիոն դոլարի կլիմայական ֆինանսավորման ապահովման համար, այս տարի գրանցել է իր ամենացածր ԿԸԻ-ն՝ 34 միավոր:
- Հարավաֆրիկյան Հանրապետության (որը հյուրընկալելու է G20 գազաթնաժողովը) ԿԸԻ-ն (41 միավոր) 2019 թվականից ի վեր նվազել է երեք միավորով:

Ավելին, շատ դեպքերում կարևորագույն միջոցառումներ հյուրընկալող երկրները (հիմնականում՝ միջինից ցածր ԿԸԻ ունեցող) սահմանափակել են դրանց թափանցիկությունը և քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը: Հատուկ ընդգծվում է, որ այս խնդիրը պետք է լրջորեն բարձրաձայնվի՝ հատկապես հաշվի առնելով առաջիկա COP-30-ը Բրազիլիայում և G20 գագաթնաժողովը Հարավաֆրիկյան Հանրապետությունում կազմակերպելու հանգամանքը:

Զեկույցում հատուկ հղում է արվում «Թրանսփարենսի Ինթերնեյշնլի» 2024թ. հոկտեմբերին հրապարակած ուսումնասիրությանը⁵, որը բացահայտում է նավթային և գազային լոբբիստների ազդեցությունը նման միջոցառումների վրա, ինչը լրջորեն խաթարում է կլիմայի քաղաքականության անկախությունն ու թափանցիկությունը:

Զեկույցը հատուկ անդրադառնում է այն հանգամանքին, որ կոռուպցիան ոչ միայն խաթարում է բնապահպանական նախաձեռնությունները, այլև լուրջ վտանգներ է ստեղծում բնապահպան ակտիվիստների համար: Մասնավորապես, նշվում է, որ.

- Շատ երկրներում շրջակա միջավայրի պաշտպաններն առավել հաճախ են դառնում բռնության, սպառնալիքների և անգամ սպանությունների զոհ:

- 50 միավորից պակաս ԿԸԻ-ով երկրներում 2019 թվականից ի վեր գրանցվել է բնապահպանների սպանության 1,013 դեպք:


Զեկույցում որպես եզրահանգում ընդգծվում է, որ կոռուպցիան խորապես ազդում է ինչպես միջազգային կլիմայական քաղաքականության, այնպես էլ բնապահպանական ակտիվիստների անվտանգության վրա: Ուստի, կառավարություններին կոչ է արվում ապահովել թափանցիկություն, կրճատել նավթագազային լոբբինգի ազդեցությունը և պաշտպանել շրջակա միջավայրի պաշտպաններին:

Զեկույցում նշվում է, որ արդարադատության և օրենքի գերակայության ոլորտներում համաշխարհային մակարդակով շարունակվում է անկումը: Որոշ երկրներում ավտորիտարիզմի աճը, իսկ ժողովրդավարական ավանդույթներ ունեցող որոշ երկրներում՝ քաղաքացիական ազատությունների սահմանափակումը, հանգեցրել են իրավական համակարգերի թուլացման: Վերջին տարիների գլոբալ մարտահրավերները, ներառյալ տնտեսական ճգնաժամերն ու անվտանգային խնդիրները, առավել հաճախ են օգտագործվել պետական վերահսկողությունն ուժեղացնելու և հակակոռուպցիոն ջանքերը թուլացնելու արդարացումներ գտնելու նպատակով:

⁵ <https://www.transparency.org/en/publications/cop-co-opted-how-corruption-and-undue-influence-threaten-multilateral-climate-action> (այցելվել է 12.02.2025թ.):

Չնայած տարբեր երկրներում հակակոռուպցիոն օրենսդրության զարգացմանը և մասնագիտացված կառույցների ձևավորմանը, գլոբալ առումով կոռուպցիայի դեմ պայքարում լուրջ առաջընթաց չի գրանցվել: **2024 թվականի վերլուծությունը ցույց է տալիս, որ ԿԸԻ-ի առումով վերջին 13 տարիների ընթացքում 180 երկրներից միայն 32-ում է բարելավվում արձանագրվել, մինչդեռ 47 երկրներում այն նվազել է:** ԿԸԻ-ի համաշխարհային միջինը շարունակում է մնալ 43 միավոր, ինչը վկայում է այն մասին, որ կոռուպցիան լուրջ մարտահրավեր է աշխարհի երկրների մեծ մասի համար: Բանն այն է, որ ըստ հակակոռուպցիոն փորձագետների, այն երկրներում, որոնցում ԿԸԻ-ն 50 միավորից ցածր է, կոռուպցիան առավել հաճախ է հանդիսանում լուրջ հիմնահարց: Նշվում է, որ, որպես կանոն, 50 միավորից ցածր ԿԸԻ ունեցող երկրները նաև խոցելի են կլիմայական մարտահրավերների առումով: Մինչդեռ, 50-ից ցածր ԿԸԻ ունեն աշխարհի երկրների ավելի քան երկու երրորդը՝ շուրջ 6.8 միլիարդ բնակչով:

Գծապատկեր 1. 2012-2024թթ. ընթացքում ԿԸԻ-ի փոփոխությունները, երկիր



Համաշխարհային վարկանիշային աղյուսակի առաջին հորիզոնականներն ավանդաբար զբաղեցնում են կայացած ժողովրդավարական ինստիտուտներ ունեցող երկրները: 2024 թվականին այն 90 միավորով կրկին գլխավորում է Դանիան, որին հաջորդում են Ֆինլանդիան (88 միավոր) և Սինգապուրը (84 միավոր):

Փոխարենը, ԿԸԻ-ի ամենացածր արժեքները, որպես կանոն, գրանցվում են ավտորիտար երկրներում, որոնցում կոռուպցիան խորապես արմատավորված է: 2024 թվականի զեկույցում վերջին երեք տեղերը զբաղեցնում են Վենեսուելան (10 միավոր), Սոմալին (9 միավոր) և Հարավային Սուդանը (8 միավոր):


Վերջին հինգ տարվա ընթացքում զգալիորեն բարելավվել է 7 երկրների ԿԸԻ-ն, մինչդեռ նույն ժամանակահատվածում 13 երկրների ինդեքսը զգալիորեն նվազել է (այդ թվում՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի):

Զեկույցում որպես եզրակացություն նշվում է, որ կոռուպցիան շարունակում է խոչընդոտել ոչ միայն ժողովրդավարությանը, այլև կլիմայի պահպանմանն ուղղված գլոբալ ջանքերին: Առանց հակակոռուպցիոն վճռական գործողությունների, կլիմայական միջոցառումները չեն կարող հաջողություն ունենալ: Հետևաբար, անհրաժեշտ է ուժեղացնել թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմները, որպեսզի կոռուպցիան չդառնա կլիմայական աղետի «մեղավորը»:

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի ԿԸԻ-ն 2024 թվականին կազմել է 47 միավոր՝ նույնքան, որքան 2023 թվականին: Սա գերազանցում է ԿԸԻ-ի համաշխարհային միջին ցուցանիշին, սակայն շարունակում է պակաս լինել հակակոռուպցիոն փորձագետների կողմից սահմանված «վտանգավորության» շեմային արժեքից (50 միավոր): Համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը 63-րդ տեղում է:

Գծապատկեր 2. ԿԸԻ-ն Հայաստանում և ՀՀ դիրքն ըստ ԿԸԻ-ի, 2012-2024թթ.



Զեկույցների շարքի հրապարակման մեկնարկից ի վեր, վերջին 13 տարիներից 12-ի դեպքում Հայաստանի ԿԸԻ-ն հաշվարկելու համար օգտագործվել են վեց ենթահինդեքսներ: 2023 թվականի համեմատ՝ 2024 թվականին դրանցից երեքի արժեքն աճել է, երկուսինը՝ նվազել, իսկ մեկինը մնացել է անփոփոխ:

Աղյուսակ 1. ԿԸԻ-ի բաղադրիչները ՀՀ-ում, 2016-2024թթ.

Տարի/Ցուցանիշ	Կոռուպցիայի ընկալման ինդեքս		BF (TI)	FH	GI	PRS	VDEM	WEF
	Դիրք	Ինդեքս						
2016	113	33	28	41	34	32	17	45
2017	107	35	33	42	35	32	20	47
2018	105	35	33	39	35	32	21	51
2019	77	42	45	39	47	32	32	60
2020	60	49	45	44	47	32	63	60
2021	58	49	45	44	47	32	59	66
2022	63	46	45	44	47	32	55	53
2023	62	47	49	44	47	32	55	54
2024	63	47	51	44	46	33	50	56

Ծանոթագրություն. Աղյուսակում ներկայացված հապավումներն ունեն հետևյալ բովանդակությունը. BF (TI)՝ Bertelsmann Foundation Transformation Index, FH՝ Freedom House Nations in Transit, GI՝ Global Insights Country Risk Ratings, PRS՝ Political Risks Services International Country Risk Guide, VDEM՝ Varieties of Democracy Project, WEF EOS՝ World Economic Forum Executive Opinion Survey:

2023-ի համեմատ 2 միավորով աճել է Բերթելսմանի հիմնադրամի տրանսֆորմացիոն համաթիվը՝ BF (TI): Քաղաքական ռիսկերի միջազգային ծառայությունների Երկրի ռիսկայնության PRS համաթիվն աճել է 1 միավորով: Իսկ Համաշխարհային տնտեսական համաժողովի «Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցում» (WEF EOS) ենթահինդեքսը 2023-ի համեմատ աճել է 2 միավորով: Այն 2023-ին ևս աճել էր՝ 1 միավորով: Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ այս ենթահինդեքսը 2022 թվականին նվազել էր միանգամից 13 միավորով, աճի տեմպերը չեն կարող գոհացուցիչ լինել: Ենթահինդեքսի 2024թ. արժեքը զիջում է նույնիսկ 2019-ի արժեքին: Սա մտահոգիչ է, քանի որ այս ենթահինդեքսով «չափվում» է տնտեսական ինստիտուտների, բիզնես միջավայրի, մակրոտնտեսական միջավայրի, տեխնոլոգիական առաջընթացի, ենթակառուցվածքների և նմանօրինակ այլ համակարգերի արդյունավետությունը:

Ֆրիդոմ Հաուզի FH ենթահինդեքսի՝ 2020 թվականից ի վեր անփոփոխ մնալը լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Այս համաթիվով մի քանի կարևոր հարցերի հիման վրա գնահատվում է կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը: Մասնավորապես, համաթիվը հաշվարկելիս հաշվի են առնվում այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են տնտեսական ազատությունը, օրենսդրական մեխանիզմների առկայությունը և դրանց կիրառելիությունը, հասարակության ու լրատվամիջոցների վերաբերմունքը պաշտոնական կոռուպցիայի նկատմամբ և այլն: **Ստացվում է, որ Ֆրիդոմ Հաուզի գնահատմամբ՝ վերջին տարիներին այս ոլորտում Հայաստանում առաջընթաց չի արձանագրվել:** Այսինքն, եթե նույնիսկ լսենք գործող իշխանության հայտարարություններն առ այն, որ այս ուղղությամբ հետևողական քայլեր են

ծեռնարկվում, միևնույն է, այս ենթահինդեքսի անփոփոխ մնալը փաստում է, որ դրանց իրական ազդեցությունը հասարակության համար նկատելի չէ: Մամուլի ազատության, պետական գնումների թափանցիկության և պաշտոնյաների հաշվետվողականության խնդիրները մնում են օրակարգում: Նման պայմաններում կարևոր է նաև հանրության ակտիվ ներգրավվածությունը՝ վերահսկողության մեխանիզմներն ուժեղացնելու համար:

Գլոբալ Ինսայթի Երկրի ռիսկայնության վարկանիշի GI համաթիվը 2023-ի համեմատ նվազել է մեկ միավորով: Համաթիվը հիմնված է փորձագիտական գնահատականների վրա: Որքան այն փոքր է, այնքան ավելի հավանական է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք առօրյայում բախվում են կաշառքի կամ այլ կոռուպցիոն երևույթների հետ:

Մտահոգիչ է նաև Ժողովրդավարության բազմազանության ծրագրի VDEM համաթվի միանգամից 5 միավորով անկումը: Ի դեպ, այն 2020 թվականին կազմել է 63 միավոր՝ 13 միավորով ավելի, քան 2024-ին: Այս ենթահինդեքսով գնահատվում է պետական կառավարման տարբեր մակարդակներում կոռուպցիայի առկայությունն ու տարածվածությունը: Ենթահինդեքսի հաշվարկման համար օգտագործվող տվյալների մոտավորապես կեսը փաստացի տվյալներ են, իսկ մյուս մասը ստացվում է քաղաքական և ակադեմիական փորձագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա: Հարցերը վերաբերում են քաղաքական կոռուպցիային, դատական և գործադիր իշխանությունների կոռուպցիոն գործարքներին, ինչպես նաև ժողովրդավարական ինստիտուտների վրա կոռուպցիայի ազդեցությանը: Մասնավորապես, օրինակ, հարցերը կարող են վերաբերել պաշտոնյաների կողմից կաշառքների ընդունման հաճախականությանը կամ պետական ռեսուրսների չարաշահման մակարդակին: Ստացվում է, որ այս հեղինակավոր միջազգային ծրագրի գնահատմամբ Հայաստանում վերջին տարիներին զգալի հետընթաց է արձանագրվել Ժողովրդավարության ասպարեզում, և միաժամանակ աճել է վերոհիշյալ ոլորտներում կոռուպցիայի ազդեցությունը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի ԿԸԻ-ի նախորդ տարվա համեմատ անփոփոխ մնալն անհանգստանալու տեղիք է տալիս, քանի որ դա մեկ անգամ ևս փաստում է, որ, չնայած իշխանությունների՝ կոռուպցիան «արմատախիլ անելու» մասին մշտապես արվող հայտարարություններին, վիճակի էական բարելավում 2020-ից հետո չի արձանագրվել: Պատահական չէ, որ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլի» հակակոռուպցիոն կենտրոնի ծրագրերի ղեկավար Վարուժան Հոկտանյանը կոռուպցիայի ընկալման համաթվի


վերաբերյալ օրերս հրավիրված քննարկմանը հայտարարել է⁶, որ «Հայաստանը պետք է լուրջ և համակարգային վերանայումներ իրականացնի հակակոռուպցիոն պայքարում, հակառակ դեպքում իրավիճակը գնալով կվարանա»:

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Տարածաշրջանային միջին ԿԸԻ-ով առաջատարը «Արևմտյան Եվրոպա և Եվրոպական Միություն» տարածաշրջանն է՝ 64 միավորով, որը 2024-ին ևս (ինչպես 2023-ին) նվազել է 1 միավորով: Հետնապահը «Անդրսահարյան Աֆրիկա» տարածաշրջանն է՝ 33 միավոր միջին ԿԸԻ-ով:

Գծապատկեր 3-ում ներկայացված են 2024 թվականին համաշխարհային և աշխարհի 6 տարածաշրջանների միջին ԿԸԻ-ները, ինչպես նաև Հայաստանի միավորը:

Գծապատկեր 3. ԿԸԻ-ի արժեքները ՀՀ-ում և աշխարհի տարբեր տարածաշրջաններում, 2024թ.



Հայաստանի ԿԸԻ-ն գերազանցում է իր խմբի՝ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի միջին գնահատականին:

Զեկույցում նշվում է, որ տարածաշրջանի շատ երկրներում թույլ ժողովրդավարական հաստատությունները և օրենքի գերակայության բացակայությունը խորանում են շարունակական անկայունության և արտաքին ճնշումների պատճառով: Այս իրավիճակը նպաստում է կոռուպցիայի տարածմանը՝ միաժամանակ խաթարելով հասարակության վստահությունը, կայուն զարգացումը և կլիմայի պահպանման ջանքերը: Ինչպես երևում է Գծապատկեր 3-ից, մեր տարածաշրջանն ունի երկրորդ ամենացածր ԿԸԻ-ն (35 միավոր) և այդ ցուցանիշով գերազանցում է միայն Անդրսահարյան Աֆրիկային:

⁶ https://www.civilnet.am/news/816722/... (այցելվել է 12.02.2025թ.):

Ի դեպ, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում միայն Վրաստանի ԿԸԻ-ն է 50-ից բարձր:

Տարածաշրջանային վարկանիշային աղյուսակում Հայաստանը երկրորդն է՝ զիջելով 53 միավոր ԿԸԻ ունեցող Վրաստանին, որը համաշխարհային վարկանիշային աղյուսակում 53-րդն է: Երրորդ տեղում՝ Մոնտենեգրոն է, որը 46 միավորով համաշխարհային վարկանիշային աղյուսակում 65-րդն է: Ի դեպ, տարածաշրջանում ընդամենը չորս երկրի ԿԸԻ-ն է գերազանցում համաշխարհային միջինին (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. ԿԸԻ-ի արժեքները ՀՀ-ում և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրներում, 2023-2024թթ.

Երկիր	ԿԸԻ 2024	ԿԸԻ 2023	ԿԸԻ-ի փոփոխությունը	Դիրք 2024	Դիրք 2023	Դիրքի փոփոխությունը
Վրաստան	53	53	→ 0	53	49	↓ 4
Հայաստան	47	47	→ 0	63	62	↓ 1
Մոնտենեգրո	46	46	→ 0	65	63	↓ 2
Կոսովո	44	41	↑ 3	73	83	↑ -10
Մոլդովա	43	42	↑ 1	76	76	→ 0
Ալբանիա	42	37	↑ 5	80	98	↑ -18
Ղազախստան	40	39	↑ 1	88	93	↑ -5
Հյուսիսային Մակեդոնիա	40	42	↓ -2	88	76	↓ 12
Սերբիա	35	36	↓ -1	105	104	↓ 1
Ուկրաինա	35	36	↓ -1	105	104	↓ 1
Թուրքիա	34	34	→ 0	107	115	↑ -8
Բելառուս	33	37	↓ -4	114	98	↓ 16
Բոսնիա և Հերցեգովինա	33	35	↓ -2	114	108	↓ 6
Ուզբեկստան	32	33	↓ -1	121	121	→ 0
Ղրղզստան	25	26	↓ -1	146	141	↓ 5
Ադրբեջան	22	23	↓ -1	154	154	→ 0
Ռուսաստան	22	26	↓ -4	154	141	↓ 13
Տաջիկստան	19	20	↓ -1	164	162	↓ 2
Թուրքմենստան	17	18	↓ -1	165	170	↑ -5


Իսմբի հետնապահներն են Ադրբեջանը և Ռուսաստանը՝ 22-ական միավորով (այդ երկրները համաշխարհային վարկանիշային աղյուսակում կիսում են 154-րդ հորիզոնականը), Տաջիկստանը՝ 19 միավորով (համաշխարհային վարկանիշային աղյուսակի 164-րդ հորիզոնական) և Թուրքմենստանը՝ 17 միավորով (165-րդ հորիզոնական): Նախորդ տարվա համեմատ ԿԸԻ-ի ամենամեծ բարելավումը տարածաշրջանի երկրներից ունեցել է Ալբանիան՝ 5 միավորով, իսկ ամենամեծ նվազում գրանցած երկրները Ռուսաստանը և Բելառուսն են, որոնց ԿԸԻ-ները նվազել են 4-ական միավորով: Վարկանիշային աղյուսակում զբաղեցրած դիրքի ամենամեծ բարելավում գրանցած երկիրը նույնպես Ալբանիան է, որը 2023թ. 98-

րդից բարձրացել է 80-րդ հորիզոնական: Նրան հաջորդում են Կոսովոն (առաջընթացը՝ 10 հորիզոնական) և Թուրքիան (առաջընթացը՝ 8 հորիզոնական): Տարածաշրջանի երկրներից վարկանիշային դիրքի ամենամեծ վատթարացումն ունեցել է Բելառուսը, որը համաշխարհային վարկանիշային աղյուսակի 98-րդ հորիզոնականից նահանջել է 114-րդ հորիզոնական: Տարածաշրջանի հինգ երկրներում 2024-ին գրանցվել է ԿԸԻ-ի պատմական նվազագույն մակարդակը: Այդ երկրներն են՝ Սերբիան (35 միավոր), Բոսնիա և Հերցեգովինան (33 միավոր), Ադրբեջանը (22 միավոր), Ռուսաստանը (22 միավոր) և Տաջիկստանը (19 միավոր):

Այս անգամ ևս Հայաստանը ԿԸԻ-ով գերազանցում է ԵԱՏՄ անդամ մյուս բոլոր երկրներին: Մասնավորապես, Ղազախստանի ԿԸԻ-ն 40 միավոր է, Բելառուսինը՝ 33, Ղրղզստանինը՝ 25, Ռուսաստանինը՝ 22:

Սահմանակից երկրներից Հայաստանը զիջում է միայն Վրաստանին: Թուրքիան 107-րդ տեղում է, Իրանը՝ 151-րդում, իսկ Ադրբեջանը՝ 154-րդում (Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Կոռուպցիայի ընկալումը ՀՀ-ում և հարևան երկրներում, 2022-2024թթ.



Գծապատկերից երևում է, որ վերջին երեք տարիներին Հայաստանի հարևան երկրներից ոչ մեկում ԿԸԻ-ի բարելավում չի գրանցվել, միայն Թուրքիայի և Ադրբեջանի վարկանիշային դիրքերն են բարելավվել:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով «Կոռուպցիայի ընկալման ինդեքս – 2024» զեկույցի վերաբերյալ կատարված վերլուծության հիմնական արդյունքները՝ նշենք.

- Հայաստանի կոռուպցիայի ընկալման ինդեքսը (ԿԸԻ) 2024 թվականին 2023-ի համեմատ չի փոխվել և կազմում է 47 միավոր: Ըստ ԿԸԻ-ի կազմված, 180 երկրներ ներառող համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը 63-րդ տեղում է: ԿԸԻ-ի՝ նախորդ տարվա համեմատ անփոփոխ մնալը մտահոգիչ է, քանի որ դա ևս մեկ ապացույց է այն բանի, որ, հակառակ իշխանությունների որդեգրած «հակակոռուպցիոն կեցվածքի», 2020-ից հետո վիճակի էական բարելավում չի արձանագրվել:
- Հակակոռուպցիոն փորձագետների կարծիքով տվյալ երկրում կոռուպցիան լուրջ հիմնահարց է, եթե ԿԸԻ-ն 50 միավորից ցածր է: Այսինքն՝ Հայաստանը շարունակում է մնալ խնդրահարույց տիրույթում:
- Կառավարության համար լուրջ մտահոգության պատճառ պետք է դառնա ժողովրդավարության բազմազանության ծրագրի VDEM համաթվի մեկ տարվա ընթացքում միանգամից 5 միավորով անկումը (այն ներառված է ԿԸԻ-ի հաշվարկման հիմքում): Ավելին, այն 2020 թվականից նվազել է 13 միավորով: Քանի որ այս ենթաինդեքսով գնահատվում է կոռուպցիայի տարբեր ձևերի առկայությունն ու տարածվածությունը պետական կառավարման մակարդակներում, կոռուպցիայի ազդեցությունը ժողովրդավարական ինստիտուտների վրա, ստացվում է, որ այս հեղինակավոր միջազգային ծրագրի գնահատմամբ Հայաստանում վերջին տարիներին զգալի հետընթաց է արձանագրվել ժողովրդավարության ասպարեզում, և միաժամանակ աճել է վերոհիշյալ ոլորտներում կոռուպցիայի ազդեցությունը:
- ԿԸԻ-ում ներառված Հայաստանի WEF EOS ենթաինդեքսը (Համաշխարհային տնտեսական համաժողովի Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցում) 2022 թվականին միանգամից 13 միավորով նվազումից հետո (2021թ. այն 66 միավոր էր) 2023 և 2024 թվականներին աճել է բավական դանդաղ և կազմում է 56 միավոր: Սա մտահոգիչ է, քանի որ այս ենթաինդեքսը բնութագրում է տնտեսական ինստիտուտների, բիզնես միջավայրի, մակրոտնտեսական միջավայրի, տեխնոլոգիական առաջընթացի, ենթակառուցվածքների և նմանօրինակ այլ համակարգերի արդյունավետությունը:

- Համաշխարհային վարկանիշային աղյուսակի առաջատարը 2024-ին ևս Դանիան է՝ 90 միավորով: Նրան հաջորդում են Ֆինլանդիան (88 միավոր) և Սինգապուրը (84 միավոր): Աղյուսակը եզրափակում են Վենեսուելան (10 միավոր), Սոմալին (9 միավոր) և Հարավային Սուդանը (8 միավոր):
- «Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա» տարածաշրջանի երկրների լավագույն եղյակում, ինչպես և 2023 թվականին, 2024-ին ևս նույն երկրներն են՝ Վրաստանը՝ 53 միավորով (համաշխարհային վարկանիշային աղյուսակում՝ 53-րդ հորիզոնական), Հայաստանը՝ 47 միավորով (համաշխարհային վարկանիշային աղյուսակում՝ 63-րդ հորիզոնական) և Մոնտենեգրոն՝ 46 միավորով (համաշխարհային վարկանիշային աղյուսակում՝ 65-րդ հորիզոնական): Խմբում ամենացածր ԿԸԻ ունեն Ադրբեջանը և Ռուսաստանը (22-ական միավոր), Տաջիկստանը (19 միավոր) և Թուրքմենստանը (17 միավոր):

Ի դեպ, ըստ Զեկույցի՝ «Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա» տարածաշրջանի շատ երկրներում թույլ ժողովրդավարական հաստատությունները և օրենքի գերակայության բացակայությունը խորանում են շարունակական անկայունության և արտաքին ճնշումների պատճառով: Այս իրավիճակը նպաստում է կոռուպցիայի տարածմանը՝ միաժամանակ խաթարելով հասարակության վստահությունը, կայուն զարգացումը և կլիմայի պահպանման ջանքերը: Մեր տարածաշրջանն աշխարհում ունի երկրորդ ամենացածր ԿԸԻ-ն (35 միավոր) և այդ ցուցանիշով գերազանցում է միայն Անդրսահարյան Աֆրիկային:

- 2024-ին ևս Հայաստանի ԿԸԻ-ն գերազանցում է ԵԱՏՄ մյուս բոլոր անդամ երկրների ԿԸԻ-ին: Ղազախստանի ԿԸԻ-ն 40 միավոր է, Բելառուսինը՝ 33, Ղրղզստանինը՝ 25, Ռուսաստանինը՝ 22:
- Հայաստանին սահմանակից երկրներից Վրաստանը ԿԸԻ-ի 53 միավորով 53-րդ հորիզոնականում է, Հայաստանը զիջում է միայն Վրաստանին, Թուրքիան՝ 34 միավորով 107-րդում է, Իրանը՝ 23 միավորով՝ 151-րդում, իսկ Ադրբեջանը՝ 22 միավորով՝ 154-րդում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան *ակտիվ հղման* տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: